

## ՀՈԳԵՅԵՐՀ ՄՈՒՇԵՎ ԱԲԵՂՅ ՊԵՏԻԿՅԱՆ

**Մուշեղ աբեղյա Պետիկյանը** (Պերճ սարկավագ՝ Պետիկյան) ծնվել է 1927 թվականի սեպտեմբեր ամսի 21-ին, Եղիպատուի մայրաքաղաք Կահիքում:

Պերճը իր միջնակարգ ուսումը ստանում է Կահիքեռում, Գալուստյանի անվան վարժարանում, որն ավարտում է 1947 թվականին:

1947—1948 ուսումնական տարում Պերճը թվարանության և արարեքնի դասառու է նշանակվում իր ավարտած վարժարանում:

Հայրենիքի կանչը, սակայն, արձագանքում է նաև Պերճի հոգում և նա հայրենադարձվում է 1948 թվականին:

Զգալով իր մեջ հոգեռարական դառնարու ու ցանկություն, Պերճը դիմում է Ս. Էջմիածնի Հոգմոր Ճեմարանի վերատեսչության, և 1949 թվականի սեպտեմբերին ընդունվում որպես Ս. լսարանի ուսանող:

1952 թվականին Պերճը ավարտում է Հոգմոր Ճեմարանի լսարանական բաժնի երեք տարիները և դիմում ներկայացնում Ամենայն Հայոց երշանկահիշատակ Հայրապետ Տ. Տ. Գեորգ Չ. Կաթողիկոսին, հայտնելով, թե ինքը կարող էր ժողովրդին լավագույնս ծառայել ընտրելով հոգմոր ասպարեզը, և խնդրում իրեն ձեռնադրել սարկավագ:



Հուսահոգի Վեհափառն ընդառաջում է Պերճին և նա, 1952 թվականի նոյեմբերի 2-ին, գերազնորհ Տ. Վահան արքապիսկոպոս Կոստանդնուպոլիսի ձեռքով, ձեռնադրվում է սարկավագ և նվիրվում Մայր Աթոռի սպասարկմանը:

1954 թվականին Պերճ սարկավագը նշանակվում է Հոգմոր Ճեմարանի վերակացու և պատմության դասատու:

Գիտակից իր կուման և ծառայերու պատրաստակամությամբ համակված, Պերճ սարկավագը, իր ընտրած ասպարեզի ավելի պատասխանատու աստիճաններին

թևակոխելու համարձակությամբ, Գիրագույն Հոգմոր Խորհրդի հավանությամբ, 1955 թվականի հունվարի 16-ին, Օշականում, մեծ վարդապետ և ուսուցիչ Մեսրոպ Մաշտոցի հանգուարանի վրա կառուցված եկեղեցում, Սահակ եպիսկոպոս Տեր-Ճողբաննիսյանի ձեռքով, ձեռնադրվում է արեղակ վերանվանվելով Մուշեղ:

Հանձնին հոգեցնորհ Մուշեղ աբեղյա Պետիկյանի, Մայր Աթոռի միաբանությունը, իր երիտասարդ անդամների շարքում ընդունվում է ևս մի բորջ, աշխատասեր, իր թարմ ուժերը Ազգին ու Եկեղեցուն նվիրաբերող խոստումնալից հոգմորականի: